գան զարգն. և զազիէսքէրքն ասեն ցվէզիրն թէ Այդ տաւադ վերջացեալ եղեւ, ո՛վ մեծ իշխան, քանզի տէֆտէրի հաքանէ Հայոցն ելաւ։ Եւ զայս լւեալ պատառեն զարգուհալն և զարնեն զնոսա վարելով ի դրանէն, և նոքա ի փախուստ առեալ հազիւ ի դուրս ելանեն յանցս ճանապարհին։ Եւ կրկին ձայնեն զնոսա ի ներս, և ոչ երթան՝ զահի հարեալ ցրուելով իւրաքանչիւր տեղիս։

Եւ օրս գնացեալ ի գերեզմաններն՝ թաղեալ զտէզկէհտար Պակին մեր եւ դարձաք ի Սամաթիա. յէրէկի օրս հանգեալ ի Քրիստոս։ Եւ օրս թէֆէռիճ թէրզոցն էր և երեկոյիս ժամ ասել գնացաք անդ։

Եւ Կիրակի օրս (7 Սեպտ.) Բարեկենդան Սուրբ Խաչի։ Գնացաք ի վերայ գերեզմանի Պակէ զայգուցն կատարել։ Եւ երեկոյիս եկն Աստուածատուր վարդապետն ի Պուրսաու։

Եւ Բշի օրս (8 Սեպտ.) Խոճա Ըռուհիճանն գնացեալ մօտ ի հին վէզիրն, որ էր ի ներսն ի պալատ թագաւորին հափս արարեալ, և զէմրերն առեալ, որ ի ծոցին էր, եկն եւ զխէթիշէրիֆն թագաւորին որ ետ մեզ զամենայն զոր յառաջմանէ տիրեալ էաք, և զՀապաշն ևս մեզ եամախ և զտեղս նոցին որ ևս ի մեր էր ձեռ։

Գշիս (9 Սեպտ.) ելեալ գնացին Սուլուսմանաստրոյ իշխանքն, եւ Մարտիրոս վարդապետն ոչ թողեալ զԿիրակոսն Նաւռոզի որդին յերեսս Վարդապետին, և յետ ելանելոյն բազում հանոյութիւնս արարեալ նա, և Վարդապետն զնա բանադրէ։

Եւ Դշի (10 Սեպտ.) աւագերէցն կարգայ գրանադրանքն, և յետ ժամուն գայ այն և ծեծէ զՍիմէոն երէցն թէ Զիմ բանադրանքն կարգացիր. և երեկոյիս ժամ չասեն երէցներն։

Եւ առաւօտուս (11 Սեպտ.) ևս ոչ ասեն ժամ. և